# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

*Կոնդակ յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի մատուցանել ի հաստատութիւն Նորին Սրբութեան զօրագիրս սինոդի.* թ. **494**։

— *Յանուն Թեմակալին Վրաստանի և Իմերեթի յաղագս փարձելոյ զմի մասնագէտ անտառապետ վասն կալուածոցն Մարցայ և անտառին Հաղարծնի.* թ. **503**։

— *Յանուն Թեմակալին Բեսարաբիոյ Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսի, յաղագս մատուցանելոյ զծրագիր պայմանի վարձակալին աթոռապատկան կալուածոց Քիշնեւի ի տես Նորին Սրբութեան.* թ. **504**։

— *Յանուն Հոգևոր կառավարութեան Հին Նախիջևանի, որով կարգի Տ. Յովէլ վարդապետն ի վանահայր Կարմիր վանուց.* թ. **516**։

— *Յանուն Եկեղեցական Խորհրդոյ եկեղեցեաց Ս. Պետերբուրգի, որով պատուիրի տալ* **150,000** *ր. փոխարինաբար եկեղեցական խորհրդոյն Մոսկուայի, վասն շինութեան կալուածոց եկեղեցւոյ տեղւոյն.* թ. **522**։

— *Յանուն Իշխան Հոգաբարձուի եկեղեցեաց Ս. Պետերբուրգի և Մոսկուայի, որով յայտնի նմա զվերոգրեալ տնօրէնութենէ վասն* **150,000** *րուբլեաց.* թ. **523**։

— *Յանուն կոնսիստորիային Երևանայ, որով թոյլատրի Յովհաննէս քահ.-ին Կաղզուանի կրել փիլոն և ստանալ բաժին ի հասոյթից ծխոց իւրոց, առանց քահանայագործելոյ.* թ. **582**։

— *Յանուն Փոխ Թեմակալին Երևանայ Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոսի, յաղագս արձակելոյ զուսուցիչս թեմական դպրանոցի և կատարելոյ նոր ընտրութիւն Հոգաբարձութեան.* թ. **576**։

— *Յանուն գործակալին Բագուայ Տ. Արսէն վարդ.-ի, յաղագս գնալոյ ի Շուշի և կատարելոյ նոր ընտրութիւն հոգաբարձուաց թեմակ. դպրանոցի տեղւոյն.* թ. **580**։

— *Յանուն կոնսիստորիային Արցախայ վասն տալոյ ճանապարհածախս Տ. Արսէն վարդապետի և տեղի բնակութեան յԱռաջնորդարանի Շուշւոյ.* թ. **571**։

— *Յանուն Տեսչի թեմակ. դպրանոցի Շուշւոյ, որով պատուիրի արձակել զխումբն ուսուցչաց դպրանոցին և ինքեան գալ ի ս. Էջմիածին.* թ. **582**։

— *Յանուն Թեմակալին Վրաստանի և Իմերեթի Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի, յաղագս կատարելոյ նոր ընտրութիւն հոգաբարձութեան Ներսիսեան Հոգևոր դպրանոցի.* թ. **584**։

— *Յանուն վանահօր Տաթևու, որով յայտնեցաւ նմա զկարգումն Եփրեմ Աբեղայի Աղայեանց ի վանահայր անապատին Տաթևու.* թ. **586**։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի յեկամտից ուխտատեղեաց Տփխեաց տալ զորոշեալ կենսաթոշակն պ. Պալեանի և որբոց Վ. Աբովեան ի գումար* **700** *ր.* թ. **595**։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի տնօրինել առնել փոխարինաբար յեկամտից եկեղեցական կալուածոց Ախալցխայի զպակասորդ գումարն վասն շինութեան աթոռապատկան տան Տփխեաց որ յԱրստատապատեան հրապարակի.* թ. **597**։

### Պարգեւ Հայրապետական.

*Կոնդակ յանուն կոյս Հռիփսիմէի Թայիրեան, որով շնորհի նմա լանջախաչ արծաթեայ ոսկեզօծ.* թ. **535**։

Կոնդակք շնորհակալութեանց, օրհնութեանց եւ ցաւակցութեանց·

Կոնդակ օրհնութեան յանուն Յարութիւն քհ.-ի Յարութիւնեան Ամուրաւան գեղջ Նուխւոյ վասն 100 ր. նուիրաբերութեան. Թ. 467։

— Մխիթարական յանուն եղբարց Բուդաղեանց ի Բագու վասն մահուան եղբօր նոցա. Թ. 480։

— Օրհնութեան յանուն հոգաբարձուաց Ներսիսեան դպրանոցի ի պատճառս 75 ամեայ յոբելինի դպրանոցին. Թ. 495։

— Օրհնութեան յանուն եղբարց Թոռոսեանց Նուխւոյ մինակի վասն բարեգործութեանց նոցա յազգային և յեկեղեցական գործըս. Թ. 563։

— Օրհնութեան յանուն Անտոնի Թամբեան Աստրախանցւոյ վասն 100 ր. նուիրաբերութեան. Թ. 566։

— Օրհնութեան յանուն ժողովրդեան Երեւան քաղաքի վասն նորակառոյց եկեղեցւոյ տեղւոյն, որ յանուն ս. Գրիգորի Լուսաւորչին. Թ. 577։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Կատարինէի Յակոբեան Կաչկովեանց, յաղագս նուիրաբերութեան նորա մի դիպակ շապկի, մի ուրարի և մի գօտւոյ ի Մայր Տաճարն. Թ. 602։

— Օրհնութեան և գոհունակութեան ընդ ձեռն Թեմակալին Քիշնեւի Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսի առ բարեպաշտօն Տիկնայս մոսկովարնակս՝ Տիկին Հեղինէ Մխիտարեանց, Տիկին Հռիփսիմէի Մայրով և Տիկին Յուսափեանէ Շորշորեանց յաղագս նուիրաբերութեան նոցա՝ առաջնոյն վեց ուրարի, երկրորդին երեք և երրորդին երկու, ի պէտս Մայր Տաճարի։

— Օրհնութեան և գոհունակութեան առ բարեգործ պարոնայս Բագուեցիս, որք առատ նուիրատուութեամբք օժանդակ եղեն ի բարեկարգութիւն վանուցն Սեւանայ՝ ընդ ձեռն վանահօր նորին Տ. Սարգիս վարդապետի, և են այսոքիկ՝

Եղբարք Բուդաղեանք ի յիշատակ հանգուցեալ եղբօր իւրեանց երկու հազար (2000) ր.
Եղբարք Թումայեանք երեք հարիւր (300) ր.
Համբարձում Մելիքեան երեք հարիւր (300) ր.
Միրզայել Արամեան երեք հարիւր (300) ր.
Կարապետ Լալայեան մի հարիւր (100) ր.
Պօղոս Ղուկասեան երեք հարիւր (300) ր.
Արշակ Ղուկասեան երկու հարիւր (200) ր.
Պարոնայք ոմանք խմբովին երկու հարիւր յիսուն (250) ր.

Ընդամենայն երեք հազար եօթ հարիւր յիսուն (3750) ռուբլի։

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 3. Սինոդը պատուիրեց Գանձակի Հոգեւոր կառավարութեան Մայր Աթոռի քարվանսարայի վարձկալից ստանալ 1899 թ. յունիսի 1-ից մինչև 1900 թ. յուլիս վարձը՝ 1803 ր. և անյապաղ ուղարկել ս. Սինոդին։

Մայիս 15. Վրաստանի և Իմերէթի Հայոց կոնսիստորիայի յայտարարութեան համաձայն Սինոդը թոյլտուութիւն է խնդրում Կովկասի Տ. Կառավարչապետից Արշակ քահ. Մինասեանի համար, որ արտասահման գնայ բժշկուելու և համալսարանում ուսումնառութիւն լսելու։

Մայիսի 15. Լուծւում է Ջերդ գիւղացի (Տփխիսի թեմում) Յովհաննէս Բեժանցի պսակը իւր կին Սոնա Սարգսեանի հետ և վերջինիս թոյլ է տրւում ուրիշի հետ ամուսնանալ։

Մայիս 15. Լուծւում է Ղարաբաղի թեմի Քարագլուխ գիւղացի Կարապետ Դաւթեանի պսակը իւր կին Աննա Յովհաննիսեանի հետ և թոյլ է տրւում վերջինիս նորից ամուսնանալ։

Մայիս 15. Անվաւեր է համարւում մահտեսի Համբարձում Քարամեանի և Եղսօ Գրիգորեանի պսակը, իսկ այդ ամուսնութիւնից ծնուած զաւակներն օրինաւոր։ Փախաղիր Յակոբ քահ. Մաթէոսեանց՝ Բաշքեանդ գիւղացի (Երևանի թեմ), պսակուածները և նոցա խաչեղբայր Յովսէփ Հայրաթեանցը յանձնւում են մարմնաւոր իշխանութեան դատին։